ԱԻՐԱՆՈՒՅՇ ԻՍՊԵՆՃՅԱՆ

ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅՈՒՆ ՄԸ ԵՎ ՊԱՏԳԱՄ ՄԸ

Եվ լսեցի վեհափառ ձայն մը։

Տեսա դինք։

Ու հոգիս ալեկոծեցավ, ինչպես շարժեցավ ամբողջ ժողովուրդ մը։

Մայիսի 29-ին էր, 1960, կիրակի երեկո։

Երկնակառույց մեր Ս. Էջմիածնեն, կտրելով դարերու ժամանակը և միջոցներու հեռավորությունը, հովվական այցի էր եկած Իր հեռավոր հոտին՝ հայոց այս օրերու Հայրիկը։

Ու երբ կլսեի Իր պատգամները, միաժամանակ ականջներուս կարձագանքեր ուրիշ ձայն մը, ան ալ պատգամաբեր ե հայրական և սիրելի՝

«Ես ասում էի ձեզ...ասում...»։

Տիրական էր այդ ձայնը, ու շարունակական, հավիտենականութենեն վերադարձ մը...։

Ներկա ու կենդանի՝ այսօր, ինչպես եղած էր երեկ...։

Սարսուռ մը պատեց զիս, հոգեհույզ սարսուռ մը, ու աճապարանքով մեկնեցա դառնալու տունս։

Տանս սեմեն ներս, անմիջապես կանգ առի, խորասուզված և երկյուղած, հյուրանոցիս սեղանին վերև կախված երանաշնորհ Գարեգին Սրբազանին նկարին առջև...։

Կենդանություն առած՝ ինք է որ կխոսեր ինձի...։

Այսօր, ինչպես այնքան անգամ խոսած էր երեկ։

Հաճախ, այդ անցյալ օրերուն, երբ Մայր Աթոռը դեռ չէր ունեցած իր նոր Աթոռակալը, ու կտագնապեին մեր հոգիները ապագայի անորոշության առջև, հարց կուտայի մեր Գարեգին Սրբազանին, դեռ առաջնորդ Ամերիկայի հայոց.

— Սրբազա՞ն հայր, ո՞վ պիտի ըլլա Էջմիածնի Գահակալին հաջորդը...։

Պատասխանը մեկին էր, հմայիչ, հավատավոր մարգարեական շունչով, ու երբ կլսեի մեր Ամենայն Հայոց Կաթողիկոսը, այդ պատասխանին արձագանքը կուգար միաժամանակ զարնելով իմ ականջներուս, իրականացած մարգարեություն.

«Ես ասում էի ձեզ... ասում...»։

Ահա՝ այդ պատասխանը.

—Զավակս, դու ինչո՞ւ ես մտահոգվում Էջմիածնի ապագայով կամ իր Գահակալով։ Այդ քո գործը չէ։ Դա իմ էլ գործը չէ։ Դա Աստուծո գործն է։ Նա Իր գործը շատ լավ գիտե, թողնենք այդ Տիրոջը։ Ես հավատում եմ, որ Աստված Իր Տան՝ Էջմիածնի Գահը առանց Գահակալի չի թողնի և հայ ժողովրդին էլ առանց Հովվապետի։ Ո՞վ է իմանում, այսօր իսկ, այս ժամին, աշխարհի որ մեկ անկյունում, Նա արդեն իսկ պատրաստում է ապագա Գահակալին։ Միայն այսքանը վստահացնում եմ քեզ, որ Նա պիտի լինի երիտասարդ, առույգ հոգվով ու մտքով ստեղծագործ մի հոգևորական, որ Նա ծնված լինի Աստուծո պատգամների ճշմարիտ առաքյալը։ Նույնիսկ մի՛ զարմանաք, եթե մի օր Նա այստեղ ձեզ այցելության էլ գա, երբ ես այս աշխարհից վաղուց հրաժեշտ առած կլինեմ։ Ու երբ դու գնաս այդ Գահակալի Աչը համբուրելու, քո վրա պարտք եմ դնում, որ իմ էլ ողջույնները տաս Նրան։ Ես լիահույս եմ, որ սա կլինի ապագայում, մի գուցե մի քիչ ուշ, բայց անպայման...։

Իսկական մարգարություն մը, ամբողջական։

Վազգեն Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց նախատեսված էր, գուշակված Գարեգին Սրբազանեն, տարիներ առաջ, ո՛չ միայն Իր ընտրությունով, այլ նաև Իր այցով հՍմերիկա։

Անիմանալի՜ խորհուրդ։

Կմոտենար Ամենայն Հայոց Կաթողիկոսին մեկնումի օրը։

Գարեգին Սրբազան իմ վրա պարտք մը դրած էր ու պետք էր համարձակություն ժողվեի ու խոստումս կատարեի։

Առիթ մը շնորհվեցավ ինձի ու Վազգեն Ա Վեհափառ Կաթողիկոսին պատմեցի ինչ որ տարիներ առաջ Գարեգին Սրբազան ըսած էր մեր Ս. Էջմիածնի ապագա Գահակալի մասին...։

Վեհափառը ներքին հուզումի ալիքե մը պահ մը տարվեցավ...։ Հայտնապես զգածված էր եղած հայտնութենեն։

Հրաժեշտի պահը հասավ։

Ի՞նչպես չցանկալ անգամ մը ևս ողջունել Հայոց Հայրապետը Համերիկա։

Թող որ նույն այդ մարգարե Գարեգին Սրբազանը նվիրական կտակ մը թողած էր ամերիկահայութիան՝ Մայր Տաճարի տեսիլը, զաղափարականը, ծրագիրը, ու կարծեր, որ այդ կտակը իր օծումը գտներ նույն Ամենայն Հայոց Կաթողիկոսեն, որ գուշակված էր Գարեգին Սրբազանի կողմե...։

Ու այդ բանը խնդրեցի խոնարհաբար Ամենայն Հայոց Հայրապետեն, հովվական այցի մ՚առթիվ Համերիկա։

Պատասխանը զոր շնորհեց, պատգամ մը ինքնին, ահավասիկ, ու զայն կուտամ այս օրերուն, երբ Մայր Տաճարի ձեռնարկը մտած է մոտայուտ իրականացումի ճամբու մը վրա.

— Մենք կխորհինք, որ դուք և մեր հայ ժողովուրդը հոս պատրաստակամ եք աշխատելու, զոհելու և կառուցելու Մայր Տաճարը։ Աստուծո Տաճարը այս հյուրընկալ ոստանին մեջ։ Կմաղթենք և կաղոթենք, որ այդ նվիրական գործը շուտով գլուխ հանեք և Ս. Լուսավորչի կանթեղին լույսը, Էջմիածնեն մինչև Ամերիկա հասնի և ծորի անոր գմբեթին վրա, հոն աղոթող և պաշտող հայ հավատացյալներու հոգիներուն մեջ։ Կմաղթենք, որ մեր հայ ժողովուրդը եղբայրական անքակտելի սիրով առլցուն, մոռնա անցյալին դառնություններն ու ատելությունները, և այդ Տաճարի խնկաբույր կամարներուն տակ աղոթե ու պաշտե, մեկ սիրտ ու մեկ հոգի եվ մենք, Աստուծո կամքով և առաջնորդությամբ։

ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԲՈՒԽԱՐԵՍՏԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲՈՒՄ 1934 ԹՎԱԿԱՆԻՆ
(Առաջին շարքի վրա, ձախից երկրորդը, Վազգեն Ա Հայրապետն է)

դարձյալ կուգանք ձեր մեջ։ կօրհնենք Աստուծո Տունը և հոն կաղոթենք Մեր ժողովուրդին հետ։

Պատգամ մը, այո՛, անցյալ մը կապող ներկային, Գարեգին Կաթողիկոսեն՝ Մեծի Տանն Կիլիկիո Վազգեն Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին, անցյալեն նվիրական կտակ մը վեր հառած՝ կենդանի ողջ աշխարհեն պատգամով մը նույնքան նվիրական ի մասին Մայր Տաճարի։

Անիմանալի՞ խորհուրդ, այս ևս, երբ մանավանդ իրականանա։

Եվ ինչո՞ւ չիրականանա։